600.0169.20.05.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 մայիսի 2020 թվականի №169Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի №169Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՄԱՍՈՎ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2020 թվականի մայիսի 7-ին «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մեկ տարի տասն ամիս ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 23-ի №169Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Ջերմուկհիդրո» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0621 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ№0621 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը, որն ավարտվում է 2020 թվականի մայիսի 23-ին: Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ լիցենզիայի պայմանների կատարման անհնարինությունը ֆորս մաժորի՝ իրավասու մարմնի անգործության հետևանք է, ինչի արդյունքում իրեն չի տրամադրվել ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ թույլտվություն, միաժամանակ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում քննվում է №ՎԴ/1083/05/20 վարչական գործը՝ Ընկերության կողմից ԼԷ№0621 լիցենզիայի պայմանների չկատարումը հիշյալ հիմքով ֆորս մաժորի հետևանք ճանաչելու հարցի առնչությամբ,

բ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի մայիսի 12-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 76-րդ կետի հնարավոր խախտման, ինչպես նաև ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածում Կայանի կառուցման պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու փաստերի ուսումնասիրության նպատակով, ինչի վերաբերյալ Ընկերությունը տեղեկացվել է Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 12-ի №ԳԲ/34.1-Մ2-5/1698-20 գրությամբ,

գ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի մայիսի 14-ի գրությամբ հայտնել է, որ 2020 թվականի ապրիլի 23-ից մինչև մայիսի 7-ը նոր տիպի կորոնավիրուսի (COVID 19) վարակի տարածման կանխարգելման նպատակով ընկերության տնօրենն ինքնամեկուսացված է եղել, ինչով պայմանավորված չի կարողացել ավելի վաղ ներկայացնել ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի մատնանշմամբ Ընկերությունը խնդրել է հարգելի համարել ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտի ներկայացման բաց թողնված ժամկետը և բավարարել հայտը,

դ) Կարգի՝

- 76-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով,
- №3 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,
- №3 հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի

Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.
3) լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,

ե) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

- Ընկերությունը խախտել է Կարգի 76-րդ կետի պահանջը՝ ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտը այդ կետով սահմանված 15 աշխատանքային օրվա փոխարեն ներկայացնելով 12 աշխատանքային օր առաջ: Ինչ վերաբերում է նշված հայտը տնօրենի ինքնամեկուսացման պատճառով ավելի շուտ ներկայացնելու հնարավորությունից զրկված լինելու վերաբերյալ Ընկերության պնդմանը, ապա այն որևէ կերպ չի կարող դիտվել որպես Կարգի 76-րդ կետի պահանջը չկատարելու օբյեկտիվ պատճառ: Նշված հանգամանքի առկայությունը հիմնավորող որևէ ապացույց Ընկերությունը չի ներկայացրել, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի

«ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Միաժամանակ, 2020 թվականի մայիսի 7-ին ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտը ներկայացվել է Ընկերության լիազորված անձի կողմից, ընդ որում էլեկտրոնային փոստի միջոցով, որին համապատասխան լիազորագիրը տրվել է 2020 թվականի փետրվարի 18-ին, որ պարագայում առնվազն անհասկանալի է Ընկերության տնօրենի ինքնամեկուսացված լինելու հանգամանքի տրամաբանական կապը լիազորված անձի կողմից հայտն ավելի շուտ ներկայացնելու հնարավորության հետ: Անգամ լիազորված անձ չունենալու դեպքում չէր բացառվում Ընկերության տնօրենի կողմից ևս թեկուզև ինքնամեկուսացման պայմաններում էլեկտրոնային կարգով համապատասխան հայտի ներկայացումը: Ավելին, Կարգի 76-րդ կետի համաձայն՝ հայտը կարող էր Հանձնաժողով ներկայացվել 2020 թվականի փետրվարի 23-ից մայիսի 4-ը ընկած ժամանակահատվածում, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից Կայանի կառուցմանն ուղղված որևէ աշխատանք դեռևս չի իրականացվել, Ընկերությունը, քաջատեղյակ լինելով ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման անհրաժեշտության մասին, ունեցել է այդ հայտը շատ ավելի վաղ (մինչև Ընկերության տնօրենի ինքնամեկուսացումը) ներկայացնելու հնարավորություն,

- ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածում Կայանի կառուցման պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու և Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցերի ուսումնասիրության մասով անհնարին է վարչական վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի վարույթում քննվող №ՎԴ/1083/05/20 վարչական գործի ավարտը: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի հիմքով վարչական վարույթի կասեցման պատճառ կարող է լինել այն դատական գործի առկայությունը, որի արդյունքում ընդունվող դատական ակտով հաստատվող հանգամանքներն ունեն

այնպիսի առանցքային նշանակություն տվյալ վարչական վարույթի համար, որ առանց այդ հանգամանքների անվիճելիության անհնարին է ընդունել վարչական ակտ: Տվյալ դեպքում №ՎԴ/1083/05/20 վարչական գործի շրջանակում քննության առարկան, ըստ էության, Ընկերության կողմից իր պարտավորությունների կատարման անհնարինության հանգեցնող ֆորսմաժորային հանգամանքների առկայության գնահատումն է և դրա հիման վրա Հանձնաժողովին՝ Կարգին համապատասխան երաշխիքի գումարի կեսի փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե արգելումը, ուստի այդ դատական գործով հայցի բավարարումն անխուսափելիորեն կազդի նշված մասով սույն վարչական վարույթի ընթացքի և դրա արդյունքում ընդունվելիք վարչական ակտի վրա, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը և 60-րդ հոդվածի 1-ին մասը, Կարգը, այդ թվում՝ դրա №3 հավելվածի 8-րդ կետը՝ **Հանձնաժողովը որոշում է**.

1. Մեկ տարի տասն ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 23-ի «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ջերմուկհիդրո» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №169Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2020 թվականի մայիսի 23-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022 թվականի մարտի 23-ը» բառերով:

2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 6 775 000 (վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի մայիսի 8-ը գործողության ժամկետով:

3. Կարգի 76-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

4. Կասեցնել Ընկերության նկատմամբ 2020 թվականի մայիսի 12-ից հարուցված վարչական վարույթը՝ ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածում Կայանի կառուցման պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու և Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցերի ուսումնասիրության մասով՝ մինչև վարչական դատավարության կարգով քննվող №ՎԴ/1083/05/20 գործով վերջնական դատական ակտի կայացումը:

5. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 23-ից, և 4-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 21-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
20 մայիսի 2020թ.